


Քրիստոնեայ ԱՅԼՍԵՆ

ՄԱՅՐ ԱՅՈՒՆՈՒ Մ. ԷԶՄԻԱԾԻՆԻ ԿՐԻՍՏԻԱՆ, ՄԵԼԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՅԱԿԱՆ ԵՐԿՆԱԲԱՐԱԹԵՐԹ



Խաչ-մասնատուփ. Վան. 1746 թ.

ԷԶՄԻԱԾԻՆԸ՝ ՄԱՐՄՆԱՅՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ էր արդյոք բարեկամյան աշտարակաշինության խորհուրդը. պատիժ մարդուն, թե գուցե եւ պարգև: Ո՞վ կարող է համապարփակ քննել ու սպասելի պատասխան տալ այն ամենին, ինչ կատարվել ու կատարվում է աշխարհում Աստծո կամքով: Թե պատիժ էր, ինչո՞ւ է ամբողջից բաժանված իմ մասնիկն այսքան բանկ ու հարազատ, այսքան սիրելի ու սրբազան՝ նախնական համընդհանուր ինչու ու հիշողությունն անգամ անդամալիորեն մոռացության տված: Ես չգիտեմ՝ ինչ զգացողություններ, ինչ տվալատություններ ու հույզեր ուներ իմ այն նախահայրը, որ ապրում էր այն մոլորակի վրա մինչև աշտարակաշինությունը, բայց անվերապահորեն զգում եմ այն էլ ինչպե՞ս եմ զգում Հայկ մահապետին՝ ամբողջի այն մասնիկին, որ միայն իմն է, միմիայն իմը: Ես Աստծո պարգև եմ համարում իմն թափն ընկած այս հողակտորը՝ թող որ քարաբառոտ, իմ լեզուն՝ թող որ միայն իմն հասկանալի, արարելու ու կերտելու, ապրելու ու մեռնելու, մոխիրների տակից անգամ հարություն առնելու, վերստին ծարավակելու, վերընձալվելու իմ կերպը, իմ ազգանունը, միայն ու միայն իմն պատկանող անկրկնելի այս ինքնությունը:

Ես պարզեմ եմ համարում արդեն 1700-ամյա քրիստոնեական իմ հավատը, իմ հավատքի լուսակենտրոնը, էներգաբաշխ Միածնաեջք Մայր Աթոռը՝ սրի, բրի, յաթաղանի տակով անցած, գրկանքներից, տառապանքներից, մահվան երախից հարություն առած իմ առողջ ու կենսալի իմաստության օրրանը:

Մարդու մանկության ու պատանեկության արահետներն անցնում են հոգեկան ու իմաստական խնդրումներին, երեակայության ու պատկերացումների զարմանալի գունդ պատկերների միջով, որոնք մշտապես մնում են մեզ հետ մեր կյանքի բոլոր շրջապատություններում: Հասունության մեջ հետադա խառնվածքի ինչն ու ինչպես պայմանավորված են շատ հաճախ, որով կերտվում է մեր հոգեկան ու մտավոր աշխարհը, ստեղծվում փոխկապը ազգ ընդհանրական հասկացություն ու կոնկրետ մարդու միջին: Իսկ այդ կապը ոչ այլ ինչ է, եթե ոչ ազգի լեզուն ու մտածողությունը, մշակույթն ու պատմությունը, հողն ու այդ հողի վրա թողած նրա կնիքը՝ անկրկնելի ու հոգեհարազատ, անփոխարինելի ու բանկ: Եվ

պատահական չէ, որ ազգային մեծագույն արժեքները մարդը կոչել է մոր անունով՝ ոչ միայն իր սիրո չափն ընդգծելու, այլև որանց մեջ մայրության հարատևության խորհուրդն ու խորհրդանիշը տեսնելու համար: Այդ մեծատառ, մեծամուն արժեքներից մեկն էլ մեզ համար մեր Մայր Եկեղեցին է՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնով: Մոլորակի որ անկյունում էլ ապրելու լինես՝ բոլորն այն փորձիկ հողակտորն է, ուր քո Աստվածն է ու քո սրբությունները, քո նախնայա արմատներն են, նաեւ քո սաղարթները, ուր

17 դար է արդեն, ինչ մոլորակի վրա իր փառանքը մկրտության կնիքն է բողբ հայոց Մայր օջախը, բողբ մեր ժողովրդի հոգու ու մտքի լույսի շեղբը, բողբ նրա սրտի մորմորը, ցավը, սիրո ու հավատի մշտնջենական կրակը: Հայ մարդու համար Էջմիածինը երբեք միայն եկեղեցու, տաճարի, ճարտարապետության կորթիկ արժեք չի ունեցել, չի եղել միայն աղոթատուն: Մեր փառավոր նախնիները նրան մշտապես շնչափրված են ընկալել ու պահել-պահպանել են այն՝ որպես կենդանի Տիրոջ կենդանի ու շեն տուն, որպես սերունդներին փոխանցվելիք անգերազանցելի ժառանգություն եւ ի հեծուկա խավարի՝ որպես Լույսի սերմնացան:


Օտար, թող որ քաղաքակիրք կոչվող աշխարհը, որ հաճախ է սիրում խոսել մարդու եւ ազգերի իրավունքներից, մահն է անպատու ծառի, սաղարթները վեր են ձգվում, իսկ բերքը չկա: Հայ ժողովուրդը իր սեփական կյանքի փորձից լավ գիտի, որ իր «հողը» ինքը պիտի վարի, ինքը պիտի ցանի եւ բերքն ու բարիքն էլ ինքը պիտի ժողովի, աշխարհի «եղբայրության» մեջ հեռես աղամորդու մեղանշումը կա, սակայն, ցավոր սրտի, ապաշխարումը ոչ: Հայի արտն իր հայրենիքն է, սերմնացանը՝ իր եկեղեցին: Մեկական հողում գցվող ամեն մի հիմք սերմնահատիկ է, որի հիմքում «ոսկիով ոսկի»

օտարին մատուցելու տխուր փորձառությունը չէ:

Այսպես ղեկավարությունները, գրկանքներն ու հոգեները մերն են, եւ արդար հաղթանակի լույսն էլ մեր արյան ու քրտինքի բուրվառից է ծնվելու: Այդ բուրվառի անուշաբույր յուղը «ոխտի ժողովրդի» ոգին է, որ դարեր, դարեր շարունակ ծնողական սիրով ու նվիրումով կերտել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, այն եկեղեցին, որի հիմնարկները կատարեց հենց Ինքը՝ մեր Տեր ու Փրկիչ Հիսուսը:

Էջմիածինը խորհուրդ ու առաքելություն ունի, եւ ամեն մի հայ ի վերուստ՝ կոչում: Եվ մահ, ով հաղորդակից չէ այդ խորհուրդին, պետք է հասկանա, որ դրո՞ւմ է իր ուխտը ճախ եւ առաջ Աստծո հետ, ապա իր եսի եւ իր արյան:

Էջմիածինը միայն հայի հավատքի օրրանն չէ, Էջմիածինը հայի մարմնացյալ է, գերագույն հաղորդությունն է իր Աստծո՝ Հիսուս Քրիստոսի հետ:



քո անցյալն է ու քո ապագան, քո հին ու նոր ողջ կերտվածքը, ուր միարժեք ընդեն բեւառում են Աստծո խոսքն ու ծառայի խոստովանությունը, ուր բոցկալում էր հայ հաճախի կանթեղը որպես «աղբյուր իմաստության», որպես բուրվառ «յոթնալույս» վարդապետաց: Անհատներին մշտապես խորհրդավորի կերպար ունի, եւ բանի որ ի սկզբանե մարդուն բնորոշ է ամեն բան տեսնելն ու շոշափելը, գգալն ու երեսակային իմացությունների, երազողությունների, պատկերացումների, խառնվածքի ինչն ու ինչպես պայմանավորված են շատ հաճախ, որով կերտվում է մեր հոգեկան ու մտավոր աշխարհը, ստեղծվում փոխկապը ազգ ընդհանրական հասկացություն ու կոնկրետ մարդու միջին: Իսկ այդ կապը ոչ այլ ինչ է, եթե ոչ ազգի լեզուն ու մտածողությունը, մշակույթն ու պատմությունը, հողն ու այդ հողի վրա թողած նրա կնիքը՝ անկրկնելի ու հոգեհարազատ, անփոխարինելի ու բանկ: Եվ

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քրիստոսի Համբարձման տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Հունիսի 1-ին Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնին, Ն. Ս. Օ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր նախագահությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Սբ. Պատարագ: Օրվա պատարագիցն էր Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Քրիստոսի Համբարձման տոնը Հայ Առաքելական Եկեղեցուն Ամենայն Հայոց կաթողիկոսության Աթոռ Սբ. Եզնիկից Մայր Աթոռ Ս. Էջմիածին փոխադրության հիշատակի օրն է նաեւ: Ի հիշատակություն պատմական այդ օրվա եւ ի հավերժություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրճաքս սրբազան արարողության, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Իջման Ս. Սեղանի առջև արվեց հայրապետական մարդաբն:

Համբարձման տոնի պատարագին ներկա էին ֆրանսիայի մի խումբ ուխտավորներ Շալվիի հոգեւոր հովիվ Տ. Հարություն քհն. Թաշճյանի առաջնորդությամբ: Փարիզից Հայաստան ժամանած ուխտավորները նույն օրը հանդիպում ունեցան նաեւ Վեհափառ Հայրապետի հետ արժանանալով Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությանն ու գոտեպնդիչ խոսքին:

Ամենայն Հայոց կաթողիկոսի այցը Հայաստանի ԳԱԱ

Հունիսի 2-ին Ն. Ս. Օ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն այցելեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա, հանդիպում ունեցավ ակադեմիայի նախագահության անդամների, ակադեմիական ինստիտուտների տնօրենների հետ: ԳԱԱ նախագահ Ֆադեյ Մարգարյան, Վեհափառ Հայրապետին ներկայացրեց ակադեմիայի վերջին շրջանի գործունեությունը: Իջման անդամների այցի հիշատակ արն. Մարգարյանը Վեհափառ Հայրապետին հանձնեց Սիսիանի տարածքում հայ հեղափոխության կողմից պղծված՝ մ. ք. ա. 18-րդ դարի իր ամրո:

Նորին Սրբությունը կարեւորեց ակադեմիայի դերակատարությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում եւ մասնավորապես կապը եկեղեցու հետ:

Սիոն վրդ. Աղամյանը՝ Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ

Ն. Ս. Օ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր տնօրենությամբ մայիսի 22-ի հրամանով հռչ. Տ. Սիոն վրդ. Աղամյանը նշանակվել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ:

Տ. Սիոն վրդ. Աղամյանը ծնվել է 1963 թ. Արաղամուն (Իրան): 1980-1985 թթ. ընդունվել եւ ավարտել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հոգեւոր ճեմարանը: 1984 թ. ձեռնադրվել է սարկավագ: 1987 թ. ձեռնադրվել է կուսակալի քահանա: 1987-1988 թթ. եղել է Արաղամյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի օգնականը: 1988-1999 թթ. հոգեւոր ծառայության է անցել Բուլղարիայում իբրեւ Վառնայի հոգեւոր հովիվ:

1991 թ., ներկայացնելով վարդապետական թեզ՝ «Բուլղար ուղղափառ եկեղեցին» թեմայով, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճաններ: 1999 թ., վերադառնալով Հայաստան, կրկին նշանակվել է Արաղամյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի օգնական:


2000 թ. մայիսի 22-ին Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսի տնօրենությամբ նշանակվել է Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ:

1700-ԱՄՅԱ ՌԻԽՏԱԳԼԱՑՈՒԹՅՈՒՆ

Աստվածաշնչում ավետված է Տիրոջ օր (Պետրոս, Բ, 3, 10), որի մասին «ոչ ոչ չգիտե, ո՛չ երկրի երեւտակները եւ ո՛չ էլ մարդիկ, այլ՝ միայն Հայրը: ...Պատրա՛ս տեղի, որովհետեւ այն ժամին, երբ չէր սպասում, մարդու Որդին կը գայ» (Մատթ., ԻԴ, 36, 44): Տիրոջ գալստյան մասին ավելում է Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի մեկնությունում:

Տիրոջ գալուտի սպասումով, հավատի՝ հոգու աշքով՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը տեսավ Միածնին: «Յոյսն է ակն հաւատոյն՝ որպէս ակն մարմնոյն»,- գրել է Ս. Գրիգոր Տաթեւացին («Մեկնութիւն սաղմոսաց», Երեւան, 1993, էջ 69): Դա երազ չէր, այլ տեսիլք, քանզի Ս. Գրիգորն այնուհետեւ, երբ իր հետ եղածներին պատմում է այդ մասին, հատուկ նշում է. «Այս գիշերվա կեսին, երբ դուք աշխատության ծանրությունից ու տրեմությունից խոնջացած ըուն էիք մտել, եւ դեռ արթուն էի մնացել ու մտախոհ էի աստվածային ողորմության անքնին հրաշքերի հանկարծակի կատարվելու, նրա այցի եւ ձեզ աստվածագետ վարդապետության իմաստուն խրատների բովի մեջ ներգրավելու մասին» (Ագաթանգեղոս, «Պատմություն Հայոց», Երեւան, 1977, էջ 107): Աստվածային տեսիլքները տրվում են սրբերին:

Սուրբ Երրորդության Լույսամբ Ս. Գրիգորին տեսիլքում երեսացել էր Միածնին, քանզի, ինչպես Ս. Գրիգորն էր պատմել, «հանկարծակի սաստիկ ծայր եղավ, որոտման բռնություն, ահավոր քնդուն... Բացվեց երկրի հաստատության խորանաշեն ծածկը, եւ իջավ մի այլ Լույսի կերպարանով, կանգնեց իմ առնուն ու ասաց. «Գրիգոր»: ...Իսկ եւ մայելով զարմանում էի: Եվ այն այրը, որն առաջ իմ առնուն էր կանգնել, ցույց տվեց ինձ ու ասաց, քի՛ «Ով մարդ, ինչո՞ւ ես զարմացած եմ չե՞ս ընթերցում Աստծու մեծամեծ գործերը»: Ասացի. «Ինչպե՞ս Տեր» (Ագաթ., «ՊՀ», էջ 107, 109): Ս. Գրիգորն այս հարցով տեսիլքում



«...Եվ տեսա քաղաքի մեջ՝ արքունի ապարանքի մոտ, ճախարակածու ոսկե խաբխախ, խոշոր բլրի մեծությամբ եւ նրա վրա հույժ բարձր երեւելու պիւն, իսկ վրան ամպե խոյակ՝ լուսեղեն խաչով: Նայեցի ու տեսա երեք այլ խաբխախներ. մեկն այն տեղում, որը մահառակվեց սուրբ Գայանեն՝ երկու ընկերուհիների հետ, մեկն այն տեղում, ուր սուրբ Հռիփսիմեն մահառակվեց՝ երեսուներկու ընկերուհիների հետ եւ մեկը՝ հնձանի տեղում: Այդ խաբխախները կարմիր էին արյան գույնով, այսինքն ամպեղեն էին եւ խոյակները՝ երեւելու: Երեք այսուների վրա կային լուսեղեն խաչեր՝ տեղումնական խաչի նմանությամբ եւ այս պյունների խաչերը նման էին այն լուսեղեն պյունի խոյակին, որը նրանցից բարձր էր: Չորս պյունների խաչերի վրա զարմանալի կամարներ միմյանց կապվեցին, եւ դրա վրա գնդերածին խորանարդ ու աստվածակերտ, զարմանալի ամպեղեն շինվածք տեսա: Խորանից

ժողովուրդների մեջ, օրհնակն է Քրիստոսի մարմնացյալ պատկերի, Աստծու Որդու քահանայապետության օծության: Այդ տեղում բոլոր Աստծու տաճարը լինի, բոլոր հավատալիների աղոթքի ու խնդրանքների տունը եւ քահանայապետության արողը» (Ագաթ., «ՊՀ», էջ 110):

Նահատակված սուրբ Լույսերը երեսուներեքն էին: Ս. Գայանեն երկու ընկերուհիների հետ մահառակվեց Վաղարշապատ քաղաքի հարավային դռան մոտ՝ դեպի Մեծամորի կամուրջը տանող ճանապարհին: Ս. Հռիփսիմեն մասին մախն ասվում է, որ մահառակվեց երեսուներեք ընկերուհիների, իսկ տեսիլքում՝ երեսուներկու: Այս վերջին մեծարժանությունը կարելու է, քանի որ հնձանի մոտ Հռիփսիմյանց Լույսերից մեկի մահառակության հիշատակությունն ամրոցացնում է չորս խաբխախների՝ Ս. Էջմիածին, Ս. Գայանե, Ս. Հռիփսիմեն եւ Ս. Շողակար եկեղեցիների հիմ-

քնեց ոսկորների հանգստյան մատուցելը: Իսկ քանի որ «Քրիստոսը կենդանի է մնում նրանց (մահառակների) ոսկորների մեջ» (Ագաթ., «ՊՀ», էջ 110-111), ուստի մահառակության տեղերում «լուսեղեն եւ հրաշալի, սքանչելի ճշմաններ են» երեւում (Մովսես Կաղանկատվացի, «Պատմություն Աղուանից աշխարհի», Երեւան, 1983, էջ 96):

Չորս պյուններից ամենաբարձրն առաջինն էր, քանի որ «Կարողիկե եկեղեցու պատիվը ավելի մեծ ու բարձր է... Կամարները, որոնք պյուններն իրար էին կապում, Կարողիկե եկեղեցու հավասար միաբանության ճշմանն են: Իսկ վրայի խորանը վերին քաղաքի եւ երկրի արքայության միաբան ժողովարանի օրհնակն է» (Ագաթ., «ՊՀ», էջ 111):

Հետագայում Հռիփսիմյան սուրբ Լույսերի մահառակության տեղերում Կոմիտաս Ա Աղեցի կաթողիկոսը կառուցեց Ս. Հռիփսիմեն եկեղեցին (618 թ.), Եզր Ա Փռատմակեցի կաթողիկոսը՝ Ս. Գայանե եկեղեցին (630 թ.), եւ Նահապետ Ա Տղեպացի կաթողիկոսը՝ Ս. Շողակար եկեղեցին (1694 թ., VI-VII դդ. եկեղեցու հիմքի վրա):

Տեսիլքի մեջ մախխմանությամբ խուճում է մահու հայոց մկրտության մասին. «Խաչին փարած լույսը հենց նույն աստվածային Հոգին է, որը փառավորում է Որդուն: ...Եվ լույսը ծագեցրեց չորս պյունների մեջ ու հորդարությամբ արդյունք բխեցրեց, որովհետեւ Կարողիկե եկեղեցուց են շնորհները, իսկ մահառակների ու քահանայության մեջ բխելու է մկրտության արդյունք՝ լվանալու հոգու աղոթ՝ մարմնակնո՞վ հանդերձ: Եվ այն, որ հորդեց, լցրեց շատ վայրեր, բազմաթիվ ժողովուրդների մկրտությանը փրկություն է լինելու» (Ագաթ., «ՊՀ», էջ 111-112):

Ս. Գրիգոր Լուսավորիչն իրականացրեց հիվանդների բժշկումը, Սուրբ Հռիփսիմյան Լույսերի աճյունների ամփոփման եւ նրանց շիրիմների վրա վկայարանների շինման, Արածանի ջրերում բյուրավոր

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ՝ ԽՈՐՀՈՒՐԴ ՓՐԿՈՒԹՅԱՆ

դիմել էր մեր Տեր Հիսուս Քրիստոսին:

Ս. Գրիգորը մինչեւ Միածնի տեսիլքը սրբագործման մեծ ճանապարհ էր անցել. ապաշխարություն՝ հոր՝ Խոսրով Անակի գործած մեղքի համար, հոգեւոր լույսով պայծառակերպում Խոր վիրապի քանոնում, աղոթք առ Աստված՝ բժշկություն հայցողներին ունկնդրելու համար:

Հայոց աշխարհի Լուսավորիչը հոգեւորված էր աստվածային շնորհներկայման խորհրդագրությամբ: Սուրբ Արարատի դաշտում՝ Նոյի իջման վայրում, Աստծո մախխմանությամբ Ս. Էջմիածնի հոգեւոր ինձնադրման մասին է ավետում: Ս. Գրիգորն իր տեսիլքի մասին պատմել է հետևյալը. «...Հանկարծակի սաստիկ ծայր եղավ: ...Եվ ես մայելով տեսա երկրի հաստատության բացված: ...[Տեսա] մարդկային մի ահավոր կերպարան, բարձր ու ահեղ... ձեռքեր ունեւր ոսկե մի մեծ կռան, եւ բոլորը նրա ձեռքերի եզր գալիս: Ինքը գալիս էր սլանալով, խոյանալով արագաբեռն արվի մեծ ու իջավ հասավ մինչեւ երկրի հաստակը, թաղարի մեջտեղը, փսխեց յայնառաքած գետին, եւ մեծ ու անշաղի բնություններ հնչեցին՝ անդունդների սանդղարանտի» (Ագաթ., «ՊՀ», էջ 107-108):

Ս. Գրիգոր Լուսավորիչի տեսիլքը վաղաշախատում Մայր տաճարի հիմնադրման մասին իր խորհրդավորությամբ եւ սրբագործությամբ եզակի էր Հայոց աշխարհի եկեղեցաշինության մեջ, որով նաեւ սուրբ մահառակների շիրիմների վրա եկեղեցիների շինության ճանապարհը բացվեց:

ներքե կամարների վրա տեսա այս երեսուներեք սուրբ վկաներին՝ սպիտակ հանդերձների լուսավոր կերպարանքով, որն անկարող եմ պատմել» (Ագաթ., «ՊՀ», էջ 108):

Մեծ խորհուրդ ունի Ս. Գրիգորի տեսիլքը, որ բառ տեկնության՝ Ս. Էջմիածնի հետ մեկտեղ նաեւ Ս. Հռիփսիմյան Լույսերի վկայարանների հիմնադրման մասին է: Նոր Ուխտի եկեղեցու խորհրդանշանն է Ս. Էջմիածինը, քանզի ըստ տեսիլքի մեկնության՝ «այսինքն, որի խաբխախը ոսկի է, եւ ինքը՝ երեւելու, խոյակը՝ ամպեղեն եւ վրան՝ լուսեղեն խաչ, այսպիսի ոսկե խաբխախը հաստատության անշաղի վկան է, երեւելու պյունի կաթողիկե եկեղեցին է, որն իր բեւերի տակ հավաքում է բոլոր ժողովուրդներին՝ հավաքարի մի միության մեջ: Անպի խոյակն ընդունելու է արարներից, երբ Տիրոջ գալուտյան ժամանակ բռնեց նրան ընդառաջ՝ բարձրանալու»:

Եվ արդեն իսկ Քրիստոսի քահանայապետության պատվով արժանանալու է Ս. Էջմիածնի տաճարը հիմնադրելու շնորհների մասին է տեսիլքի մեկնության շարունակությունը. «Նրա վրայի լուսավոր խաչը ինքը մեծ քահանայապետությունն է

նադրման տեսիլքը:

Ս. Էջմիածնի խորհրդից հետո տեսիլքում արվում են նաեւ Ս. Գայանե, Ս. Հռիփսիմեն եւ Ս. Շողակար եկեղեցիների խորհուրդները. «Իսկ երեք խաբխախները, որոնք արձագույն կարմիր էին, մահառակների ներդրումների, չարաբարձների ու մահվան

Աստվածային մախխմանությամբ՝ հավատի գորագույն Հիսուս Քրիստոսով Հայ Առաքելական եկեղեցուն վերապահված էր պատմության փորձրակից ալիքների վրա լինել հազարամյակների խորքից եկող հայ ժողովրդի ազգապահպան հզոր վեճը:

համբերության համար են, քանզի իրենց մահը ի վաղ արտության խաբխախ դարձրին՝ իրենց արյունը բախելով: Ամպեղեն պյուններն այն քանի համար երեսուցին, որ ամպը հարություն, երկինք վերանալու

լու բեւեր արագությունն ունի: Եվ երեւելու խոյակը ճշմանակում է, որ նրանց բնակությունը աստվածային հոր մեջ է լինելու» (Ագաթ., «ՊՀ», էջ 110):

Տեսիլքում Ս. Գրիգորին երեսուցած չորս խաչերից առաջինը՝ քահանայական պատվի պարծանքը, Քրիստոսի խաչի փառավորությունն էր: Մյուս երեք խաչերը Լուսավորչի կողմից Լույս մահառակների շիրիմներին կանգնեցված վկայարանների խորհուրդն էին կրում: Այդ խաչերը «տեղադրված էին սրբերի գերեզմանների մատուցների տեղում, որպեսզի նրանց արյան բաժանված տեղում շինվեն ի-

հայերի մկրտության գործը, որով ազգապահպան Հայաստանում քրիստոնեությունն առաջինն աշխարհում պետական կրոն հռչակելու իրողությունը (301 թ.):

Աստվածային մախխմանությամբ՝ հավատի գորագույն Հիսուս Քրիստոսով Հայ Առաքելական եկեղեցուն վերապահված էր պատմության փորձրակից ալիքների վրա լինել հազարամյակների խորքից եկող հայ ժողովրդի ազգապահպան հզոր վեճը: Մայր եկեղեցու գրկում հոգեւոր կատարելության ճանապարհը լուսավորված է Աստծու իմաստությամբ, «քանզի ով ճշմարտությամբ միացած է Քրիստոսի սիրո հետ, հոգու աշքով տեսնում է իմանալի Արեգակի ճառագայթների անբեռնիչ հստակ Լույսը, որ ... սրբաւետիլ ու սրբաշախյաց անպոտոր հստակությանը դեպի Իրեն է ձգում հայացքները, եւ քանզի իրենց ընդ երկինք՝ անմատույց տեսիլին է մերժեցնում եւ ճշտությանը կշռադատում Միավոր Չորսության Երեք անձանց երկրպագությունը»: Ինչպիսի, Ս. Էջմիածնի հոգեւոր աստիճանների վեճությամբ են աղեղեն Տեղիչն (Վաղարշապատ) եւ Հայոց պատերազմի մասին», Երեւան, 1989, էջ 223) երկի շարունակությունը հետեւյալ տողերը. «Եվ արդ, ով Աստծու աստիճաններով ելած լինի եւ բարձրությամբ արթունքից հասած ու անմահ մեծությունը կատարելապես տեսած, միայն մա կաթանագի անանց ուրախությունն ու անտրամական մխիթարությունը»:

Էդուարդ Դանիելյան
Պապն զիպ դոկտոր

Հարունակուրջունը էջ 5

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

ՀԱՅՈՒՆ ՀԻՄՈՒՄԸ

Եւ կը սիրեն Հիսուս Նա-
գովորեցին եւ կը հավա-
տամ ամուր:

Կը սիրեն Պատուհանը եւս, եւ
Տանընդ, եւ կը հավատամ ամ-
ունը:

Յելենական ճարտարա-
պետական ծեսի պարզ
գծերու խորանկարին վրա
Պատուհանը կը հանդիսանա ակ-
ներե ու պայծառ, հոյ գաղա-
փարի մաքրամաքուր լույսե-
րով, աչքերը հառած կյանքի
մեծ խորհուրդին վրա, եւ եթե
Տանընդ կը վերցնեն հայտնա-
տեսական խորին տեսիլքներ,
բանդալուշայի շրջապատակե-
րներու, խնդրութեամբ քանդակ-
ված երկինքներով, ուր դժոխքն
ու արքայութիւնը կը հաստա-
տեն, այնուամենայնիվ վստահ
են ու վեհ իր քայլերը եւ իր
ամենը գծով եւ մեր աչքերուն
առջեւ իր անբողբոջութեամբ:

Հիսուսը, մեր հոգիներուն
մէջ, սրբոված է գունատ
անտուգութեամբ մը:

Ժազոպ Սմիթ մը իրավունք
ունի զայն նստեցնելու ֆլա-
մանտացի ընտանիքի սեղա-
նին շուրջը: Սուրբիւր մը կամ
Վելազկեզ մը կարող են նշա-
վակել անոր մարմինը եւ անոր
աչքերուն մէջ դնել վառած ա-
ծուխ, վասնզի Սպանիացիներ
կը պահեն զայն իր հոգիւնը դժոխ-
քին մէջ, հոգի մը, որ միշտ լե-
ցուն է կրոնական տվարտան-
քներով: Եվ կապույտ երկնքի
տակ, կոպտուտ ծանապարհնե-
րու վրա, Իտալացիներ կը գծեն
անոր պատկերը որպէս զի կա-
րողանա տեսնել զայն ամեն
տեղ եւ միշտ իր գորավոր տե-
րը եւ եղբայրը:

Բայց ո՞վ տեսած է, ո՞վ կը
ծանփնա շայուս Հիսուսը:

Մեր Հիսուսը ստակալի-
րեն լուծ է եւ, ան երբեք
ապրած չէ հայ հոգիւնը ներք-
այստուր, վասնզի ոչ ոք տն-
ւած է զայն:

Ամօժիլ գիշերներուն մէջ,
երբ երկինքը զոգով կը թափե-
ր լործունքի նման, երբ հայ քա-
ղաքը կ'ապրեր ստակալի վա-
յս, ուր մայր տուններու դռն-
քը գորդաբարձ էին արդունա-
խանձ նշաններով, ոճիւրին Տո-
նը լալուի համար, մենք մեծ
հույսերով պատանգներ մոր,
բայց ան երբեք չեկալ:

Հայաստանի դաշնութիւն
վրա, Մահու ու Ռժիւրը հաճախ
պարեցին տոյութեան աս-
րապատուր եւ սրտեցին կա-
մի տվութեան մը արդար-
ներու բոլորներ - բայց Հիսուս
այնտեղէն երբեք չանգալ:

Մեր տանջանքներուն դա-
րերը հրդեհեցին երկին-
քը՝ վտանգը պոռագող մը
ձայններով եւ կատուիկի ստակա-
լիւրտար տաճարը մեր կմայր-
ներուն - Հիսուս ոչ մէկ լույսով
զայն լուսավորեց:

Մենք ունեցանք դժբախ-
տութիւնը, մեր քրոնիքները զո-
գորած եւ մեր արդունովը վա-
ցիներ անոր երեւակայական
ոտքերը, բայց զայն երբեք
չտեսանք:

Հիսուս օտար է մեզի:

Եթե Հիսուս ապրած չէ մեր
հոգիներուն մէջ, եթե մեր
գաղափարներուն մօտ չէ ան,
եթե մենք չենք կարողացել ա-

նոր պատկերը ստեղծել, իկոնի
վերածել եւ արվեստ ստեղծել
անով, պատճառը այն է, որ ա-
նոր ներքին բարոյականը, ա-
նոր իմացականութիւնը եւ են-
թագիտական գաղտնիքը
հեռու են մեզմէ:

Ազգային համաճարը, հիա-
նալի հայտնաբերութեա-
յանը մը ընդունելով Քրիստո-
նեւութեան հիմնադրին պատ-
վերները, չէ ըմբռնած, չէ աչ-
քած անոր ներքին եւ անձնա-
կան պայքարը: Հայկական
համաճարը վերատեսչած չէ,
ցաված չէ հրաշման ցավերով,
վառած չէ ճորտ կրոնաստեղծի
բարոյական խարույկը:

Ոչ մէկ գաղափար, ինչքան
նոր եւ գեղեցիկ ուր ան, կա-
րելի է յուրացնել պարզո-
րեն, առանց ներքին
պայքարի, առանց հոգե-
բանական ծիգի մը որ կը
մղե գնդե ճորտ վերաս-
տեղծելու զայն:

Մուսկ կրոնքը կամ
Մկարդապետութիւնը,
տարածվելով տար-
բեր ժողովուրդներու
մէջ, տարբեր ծեսեր
եւ արտահայտութիւններ
կ'ունենա, եւ ցեղին առա-
քիչութիւններն են բարո-
յական հարստութիւն-
ներն են, որ կ'ապրեցնեն
նոր կրոնքը եւ ոչ թե հա-
կառակը: (Միսի ինչու ծի-
ծարելի եւ ողորմելի կը
թվի մեզի, օրինակի հա-
մար, կաթողիկոսներու քան-
քերը՝ մտցնելու մեր մէջ
լատին ցեղե ստեղծված,
կարմրաթուշ Հիսուսը:
Բալական է նայիլ հայ
կաթողիկ վարդապետնե-
րու հազուսնի վրա, նկատե-
լու համար հակասութիւնը հայ
մորուրի, հայ դեմքի եւ ժգովի-
թի գլխարկին մէջ: Այլ է պատ-
ճառը, որ գեղագիտական տե-
սակերտն տույ կ'ունակործնույր
սիրելի չեն մեզի):

Քրիստոնեւութիւնը ընդու-
նելով մեր մէջ, այն ազա-
տանիւն եւ համակրելի ծեսով,
որ գիտենք, դժբախտաբար
աղքատ մնացած է. այն կ'ար-
ծես չունի ամենագլխավորը
սիրտը, եւ Հիսուս հոն բռնի կը
մնա:

Հիսուսը իսկական ստեղծա-
գործի եւ ինքնաստեղծի մեծա-
շուք սրիստակն է:

Ան ստակալի կովի մարդն է
կռիվ, գոր մղեց ինքն իր դէմ:

Տարօրինակ, հոյակապ
Տեղով մը, ան ոչնչացուց,
մաքրեց ու սպաննեց այն, որ
արդունին, հոգիւնը եւ մարմ-
նին թուլութիւնը կը կազմէր
ՆԵՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

Առաջին եղով ան, հասկնա-
լու, գերագույն հայտնաբե-
րութեամբ մը, սեմական թույնի
վտանգը, որ կը խեղդէ իր ե-
րակները, կ'ուժասպառէ իր
դնդերը, կը նվազեցնէ իր
մտային կարողութիւնը, կը
պարարէր իր սիրտը եւ ան-
տարբերութեամբ կը լեցնէր իր
հոգին: Արիական իտեալը ա-
ռաջին երկնային ճառագայթը
եղավ, որ լուսավորեց իր ամբը
եւ իր առջեւ բացավ այն ոս-
կեփայլ եւ գմբուխատափ-
ուռ ճանապարհը, որ գի-
տակցորեն գինքը տարավ
դէպի Գողգոթան:

Հաղթել ինքզինքին, տեղն ու-
լալ բոլոր առաքիչութիւննե-
րուն եւ խորհուրդներուն, գոր
անձը կը պարունակէ իր մէջ,
ըսել է տիեզերական ուժը դառ-
նալ, ըսել է աստվածանալ:

Այս իսկա մարդը, այն օրն
իսկ, երբ կ'ազատի իր ցե-
ղին վատթարութիւններն, ի-
տեալամարդ մը կը դառնա:

Սեմականը երբեք իտեալ չու-
նի. ան ունի գործնապաշտ
նպատակներ, բայց երազ եր-
բեք: Սեմականը անհունը չի
ժանցար (Ֆիլոն Աղեքսանդ-
րացի), ան կը սպասէ Աստվա-
ծի մը, բայց չի փնտռէր զայն:

Սեմական ցեղը ստորադա-
ցել մըն է. ան կ'ամացի է եւ
նյութապաշտ (Օթթո Վայնի-

կան տագնապներու փնտռու-
մերու պակասը մեր մէջ. ու-
շագրավ է նաեւ պակասը առա-
քելութեան եւ արիականութեան
գիտակցութեան:

Հոն, ուր չկա հոգեկան խո-
րին կյանք, մտածումներու
բուն պայքար, անիժյալ հար-
ցերու անխառնակի մրմառա-
րու՜մը՝ հոն արվեստ չի կրնար
ուլալ:

Մովսէսը միտաթի արյու-
նի հրծկանքն է. հրծկանքն է նաեւ
բախտավոր տեսիլքներու (Gaudium felicis-
sime visionis):

Վերքերուն սրտին մէջ անհ-
րաժշտութեան պիտի ծնի նշա-
քաբանը, թե չէ՝ անութիւնը կը
կ'անեն զմեզ:

Չյուրն եւ Արյունը
ստեղծագործութեան կեդ-
րոնն իսկ են, վասն զի ա-
ռաջինը՝ նշանաբանն է անար-
ատութեան, իսկ
կենդանի նշանաբանն է
զգայականութեան գի-
մին:

Հիսուս մանուկ էր եւ
ժյուն, եւ զգայականութե-
ան (extase) էր ան, վասնզի
կը թրթար իրկիզված ծաղիկի թերթի
մը նման:

Եվ ահա ինչու համար
զայն պետք է դասավորել
ամենամեծ արվեստա-
գետներու շարքին մէջ:

Բարոյագետները,
Բիլիլիստիականները,
ընկերաբանները դուրսին
կեղծով կարող են ըմբռ-
նել Սուրբ Պողոսը, օրի-
նակի համար, բայց Հի-
սուսը երբեք: Չայն կա-
րելի է հասկնալ միմիայն
գեղագիտական համակարա-
նով, արվեստագետին հատուկ
թափանցումով: Անոր հրացունը
բանաստեղծականն է. ան գույն
է, երաժշտութիւն, գիծեր:

Նրվստ է ան:
Ուշագրավ է, որ այն ժողո-
վուրդները, որ կը սիրեն եւ կը
տեսնեն Հիսուսը, կը գարդարեն
զայն: Անոր վերքերը թանկագին
քարերով կը փայլեցնեն եւ իր
չարչարված մարմինը կը փառ-
թեն ոսկեգոծ նկարներով հեռ-
ված, գույնզգույն կտավներու
մէջ:

Եվ Հիսուս, հակառակ տաժա-
նակի շարչարաններուն,
գորս ապրած է, կը ներկայանա
այս ժողովուրդներուն իբրեւ
բերկաբան, ոչ թե իբրեւ մարտի-
րոս, այլ իբրեւ ստեղծագործ եւ
արվեստագետ:

Հիսուսի հարցը մտերմ-
ունէ կապակց է, հայ ազգի
մտավորական եւ հոգեկան ա-
պագա կյանքի բախտին հետ:

Համարը տանք այն ար-
ժեքներուն, գորս ունիւրն եւ
միեւնույն ժամանակ առանց
նկատի առնելով խղճուկ
խորհրդածութիւնները, դու-
ցագանական ծիգով մը գի-
տակցութիւնը ունենանք
այն դատարկութեամբ, որ կը
շրջապատէ զմեզ եւ կը լեց-
նէ մեր հոգիները:

Արդարեւ, ստրկացած, մե-
ռած բան մը կա Հայ Հոգ-
վույն մէջ, որուն դեմ պար-
տավոր ենք պայքարի:

Հիսուսը գոր դարձել է վեր
ընդունած ենք կարծես ծեսի
համար գոյութիւն չունի ոչ
մեր արվեստին մէջ, ոչ մեր
գոգականութեան մէջ, ոչ ժո-
ղովուրդին հավատքին մէջ:

Հիսուսը իբրեւ հայ՝ իբրեւ
պատկեր, իբրեւ Աստված, որ
կ'ապրի, գոյութիւն չունի:

Ուստի, որպէսզի ապրինք
կենդանի կյանքով, հարկ է
կ'ան վերաստեղծել զայն՝
նորեն ապրելով իր ամենա-
կան, ներքին պայքարը՝ ա-
րիական իտեալին հասնելու
համար, կ'ան պետք է
մարտնչիլ անոր դեմ, տա-
պալել զայն, ստեղծելու հա-
մար նոր պատկերը մեր նոր
հոգիին:

Վաստկածներուն», ինչ-
պես ոմանք տգիտորեն կը
խորհին, ըսել է մնալ առանց
ոչինչի, վասնզի ամենը ի-
րավամբ հին են եւ մեռած:
«Անարդառնալ» բառն իսկ
վերայի ծուլութեան նշան է:

Ապրիլ այն հոգեկան աղ-
քատութեան մէջ ինչպէս
մենք կ'ապրինք, կը նշանա-
կեն ճորտագործել մեզի դեմ, եւ
տիեզերական խորհուրդին
դեմ: Ժողովուրդ մը, որ բա-
րոյապես չի նորոգվիր, նոր
արթնքներ չի ստանձնել, իս-
տապարտված է եթե ոչ մեռ-
նելու, գոնե ապրելու ամո-
թալի, դիպի կյանքով մը:

Ես կը հավատամ, որ այն
մտավորական ազնվակա-
նութիւնը, որ մոր կը մնի,
հայկական նոր արդուն մը ու-
նի իր մէջ հրդեհաշունչ եւ
զգայական:

Կը հավատամ, որ շատ
շուտով, նոր արվեստ որոնե-
լու ուղիին մէջ, ան պիտի
հանդիպի կնճռու, բայց
անհրաժեշտ կրոնական
հարցերուն եւ իր վերժա-
նութեան տաճարի մէջ պիտի
ընդունի աստված մը, որ
կ'ապրի եւ կը մղէ ստեղծե-
լու:

Հիսուսը գոր կը սիրեն,
Չոգ մեր իմօն: Չի ու-
գեր զայն տեսնել գունատ եւ
աղքատ, ինչպէս կը ներկա-
յան մեզի: Գիտեն, որ ան
պիտի նախընտրէր երկրորդ
Գողգոթա մը, քան թե այն
անգույն կյանքը, գոր կը վա-
րե Հայ Հոգիւնը մէջ:

Ես կը գգամ Հիսուս Նա-
գովորեցին կ'արդարացնէ
զիս:

«Ծառը իր արմատն է
փնտրում» (1910-1922)
շարքից



Անշուշտ մեր թանկա-
միլիւններ paradoxal եւ
«անհասկանալի» պիտի
գրեմեն իմ գաղափարներու:
Անոնք համար չէ գրված
այս հոգիւնը, այլ այն
փոքրամասնութեան հա-
մար, որ լուրջութեւն կը խո-
րե Հայ արվեստի ապա-
գալին վրա:

«Մենք ապավինում ենք այն խաչին, որի վրա քանդվեց մեր Տօր Հիսուս Բրիտոսը». ամեն:

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

Եկե՛ք հիմա հեղինակի հետ միասին փնտրենք, որտեղ և ինչպե՛ս գտնվում է ձեր հայրենիքը՝ ձեր հայրենի տունը:

Ամառ է: Գուցե, երկար սպասված: Ընդուն ու տաքը համազարկ տարբեր տեսակներ են առաջարկում: Երազանք է զգնել զով ու գողտրիկ մի անկյուն ու վայելել բնությունը՝ Հայոց բնաշխարհը: Իսկ կա՞ մեր փողոցի երկրում մի անկյուն, ուր չլինի աղոթատուն...

«Սիրո մոլորակն» իր ամառային պտույտներն սկսում է ծամփորդությամբ հավատով, որ կլինեն ուղեկցիներ: Ծաղկածոր:



Պատմում են, որ Պաշտպանաց տոհմի իշխանագն օրիորդներից մեկի ցանկությամբ այս գեղատեսիլ ծորախով-տուն մի ամրոց է կառուցվել, կողքին շքեղ ծաղկանոց: Օրիորդը պահանջել է, որ հայրենի երկրի ամենագեղեցիկ ծաղիկներն աճեցվեն իր ծաղկանոցում: Այդպես էլ արվել է: Բայց զարնանային ուժգին բամբակն ավելի է ծաղկանոց ու ծաղիկները ցրել ծորով մեկ: Ամբողջ ծորախովիտը լցվել է բուրավետ ու գունագեղ ծաղիկներով, եւ այդ ժամանակվանից տեղանքն անվանվել է Ծաղկածոր:

Ըստ մույն ավանդության՝ օրիորդի պահանջով ամրոցի կողքին կառուցվել է Կեչառիսի վանքը, որպեսզի վանահայրերը գիշեր-ցերեկ աղոթեն ցրված ծաղիկները հետ վերադարձնելու համար:

Սա ավանդապատմումն է: Իսկ իրական պատմությունը:

Կեչառիսի հողակերտ վանական համալիրը միջնադարյան Հայաստանի կրոնական ու մշակութային նշանավոր կենտրոններից մեկն է եղել: Այն կառուցվել է իր ամբողջական տեսքն ստացել է 11-ից 13-րդ դարերի ընթացքում: Բաղկացած է չորս եկեղեցուց, զավթից ու երկու մատուռից: Գլխավոր Սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցին կառուցվել է նշանավոր գիտնական, փիլիսոփա ու մանկավարժ Գրիգոր Մագիստրոսը: Այդ է վկայում եկեղեցու մուտքի արձանագրությունը: Գրիգոր Մագիստրոսին է վերադրվում նաեւ Սուրբ Եշան եկեղեցու կառուցումը: Նրա կողքին Կաթողիկե եկեղեցին է, իսկ քիչ հեռու՝ Սուրբ Հարություն փողոցի եկեղեցին:

Կեչառիսի վանքը դարերի ընթացքում բազմաթիվ անգամ ավերվել ու վերանորոգվել է: Այժմ էլ մորոզական աշխատանքներ են կատարվում, ու շուտով ավարտվելուն պես, վանական համալիրը վերստին կօժիլ ու կհառնի իր ողջ հմայքով:

Կեչառիսում ապրել ու գործել են նշանավոր գործիչներ, գիտնականներ, վանականներ: Հուսով եմ՝ շատերին է հայտնի խաչատուր Կեչառեցու անունը: Նա եղել է Ծաղկածորի վանահայրը: Մշակութային նշանավոր գործիչ էր ու բանաստեղծ:

Կանոնի շրջակայքում մինչեւ օրս գտնվող գեղաբանդակ խաչքարերը վկայում են, որ այստեղ ապրել ու ստեղծագործել են նաեւ տաղանդավոր քարգործ վարպետներ: Կեչառիսի վանական համալիրի կարեւոր կառույցներից է նաեւ Կեցիկ ճարտարապետի

մահարձան-խաչքարը, որը հեղինակել են նրա ճարտարապետ եղբայրները:

Վանքում եղել է նաեւ գրչության կենտրոն. ուր ստեղծվել, արտագրվել ու նկարագրողվել են բազմաթիվ ձեռագրեր՝ թե տեղում կիրառելու եւ թե պահպանելու ու սերունդներին փոխանցելու նպատակով: Դրանց մի մասն այժմ պահվում է Երեւանի Մատենադարանում:



«ՍԻՐՈ ՄՈԼՈՐԱԿ» ՀԱՐՅԸ

Ո՞վ կարող է լինել քո ընկերը, ո՞ւմ հետ ես ընկերություն անում: Պատասխանել են Մանրակարչության արվեստի կենտրոնի սաները:

Իմ ամենամոտ ընկերը նա է, ում հետ մտերիմ եմ մանկությունից: Նա իմ ամենասիրելի, ամենասարակից մարդն է իմ ընկերուհին: Նրան ամեն ժամանակ, ամեն իրավիճակում համարձակ հայտնել եմ սրտիս բոլոր գաղտնիքները, ու նա կիսել է տխրությունս, կրկնապատկել ուրախությունս:

Մոնա Ամբարջյան (15 տ.)

Ես շատ ընկերներ ունեմ, բայց իմ ընկերը հայն է: Միայն հայը կարող է լինել հային խնայական ընկեր: Իմ ընկերը իմ ընտանիքն է, որը միշտ ամուր ամրոցի պես կանգնած է իմ քիչունքին: Իմ ընկերը իմ դպրոցն է, որտեղ ես սովորում եմ կյանք մտնելու, այսպես ասած՝ արվեստը: Իմ ընկերը իմ հայրենիքն է, որն ինձ դաստիարակում է, պահում ու պաշտպանում է օտար ուսմունքներից: Իմ ընկերը այս կյանքն է, որից ես շատ բան եմ սովորում: Իմ ընկերը իմ հավատքն ու խղճմանս է: Ընկերությունը սրբություն է, այն ինձ համար անսպառ լույսի աղբյուր է...

Հովսեփ Դավթյան (14 տ.)

Պատմիրս չկա ուրիշական, Ոչ էլ գլխիս՝ մի իշխան: Կերակուրս ամռանն եմ պարբերաբար, Ծուլին ինչնից օրինակ է վերցնում:

(ցրված)

Թողն եմ ես գեղեցիկ, Ճանաչո՞ւմ ես ինձ, փողոցիկ: Խորհրդանիշն եմ Սուրբ Հոգու, Կտուցիս ունեմ տերեւ ձիթենու:

(վիզուալ)

Մենք չենք ծնվել, Բայց մեռել ենք:

(տիգ՝ լուր)

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՃՈՒ

Ազգն ունի գանգ, Դա մեր լեզուն է՝ Ապրծուց օրհնված, Բարեհնչուն է:

Վահան եւ սուր, Սուր եւ վահան, Ազգի պաշտպան եմ Պաշտպան Հայոց լեզու Մեր սրբազան:

ՈՒՍՈՒՅՉՈՒՆ-ՀՈՒՍ

Դուք մեզ համար՝ «Փորրիկ» Մաշտոց, Միգուցե մեծ... Դուք մեզ համար՝ Վատիկան մոնիկ, Գուցե արեւ... Չեք փանջանքին եվ սուրբ գործին՝ Արեւի լույս Ու ջերմություն: Դուք մեր արարա՝ «Մաշտոցուհի», Մեր սիրելի Ուսուցչուհի: Արփին Դադարյան (14 տ.)

Մենք ծնվել ենք, Բայց չենք մեռել: (տվեց՝ միտք)

ԼՈՒԿԱՆԵՐ

Տաթևիկ Մարգարյան Բ. Գյումրի

Մ Ո Ւ Մ Ո Ր Ո Ր

Յուզարարի հյուրերն այս անգամ երկուսն են՝ «Սիրո մոլորակի» ուղեկցի-ընթերցողներին արդեն բավականաչափ ծանոթ Լիլոն (14 տ.) եւ առաջին անգամ ներկայացող Իվետան: Իրենց աշխատանքներում երկուսն էլ պատկերել են Հիսուս Զրիստոսի համարածան տոնը:

Ծանոթանալով Իվետայի հետ: Նա էլ 14 տարեկան է, բայց նկարել սկսել է ավելի վաղ տարիքից, իսկ 9 տարեկանից հաճախում է նկարչական դպրոց՝ Վա- ճարարական քաղաքում: Սիրում է նկարել բնության տեսարաններ, կենդանի- դարձապատ թռչուններ: Ամենասիրելի կենդանիներն են ձին, շունն ու եղնիկը. շու- նը՝ հավատարմության համար, իսկ ձին ու եղնիկը՝ գեղեցիկ են: Գեղեցիկ ասե- լով՝ հասկանում է նաեւ երաժշտություն՝ ժամանակակից ու ժողովրդական: Ըստ Իվետայի՝ գեղեցիկ են նաեւ այն մարդիկ, ովքեր հոգով մաքուր են ու հավատա- ռիմ:

Շատ է սիրում կարգալ արկածային գրքեր, բանաստեղծություններ ու հե- թքաբներ: Սիրելի հեքիաթներն են Թունանյանի «Պոչատ աղվեսն» ու «Քաջ Լա- ճարը», հավանում է հատկապես Նազարի կերպարը:

Իվետան երազում է նկարչուհի դառնալ, բայց բացի նկարելուց, նաեւ գրում է երգեր ու բանաստեղծություններ: Սի երազանք էլ ունի. շուտ իրականացնանք մայրիկի ու թուրքիկի ցանկությունները, ինքը շնիկ ունենա, ու մի հնար լինի, որ մայրիկի չարերը բարիանան, նաեւ այնպես լինի, որ ամեն օր ամառ լինի, որովհե- տեւ ամառը տաք է, աշխուժություն կա ու ազատություն է...

Իվետա Նավասարդյան (14 տ.)

Լիլո (14 տ.)



ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԿՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄԶՄՏՈՂՔՆԵՐ

Ջարհուրելի դրողը... ու նախկին կարգերը հիմքից մինչև գագաթ փոշի դարձան: Շովա-ցավ, փրկից ու ժայթքեց ողջ հայ ուժը, միտքն ու հոգին եւ մեղացա՞ց Ազատություն... Չայնոս աշխարհի ակամքն ընկավ: Մտածեց, մտածեց ծերուկ աշխարհը, ծանր ու թեթև փորձություններ հնարեց, հայոց ազատության ձգտումը, փափագը ստուգեց ու հայտարարեց. «Ազատ եք»:

Յիշում եմ՝ ի՞նչ տառապանքներով, ցուրտ ու սովի դեմ պայքարով, ամեն ինչից ազատ ու ար-նոցի փափակներով հասանք դարերի մեր ե-րանքի՝ ազատությունը: Բայց հասանք ու... կանգ առանք: Ու այդ օրվանից ամենատար-բեր ասպարեզներում ազատությանը անտե-րությունը եկավ փոխարինելու, որովհետեւ նախապես էլ անվերջ ձգտումն ու պայքարի տեղերն էր գրավել անտարբերությունը: Քաղաքական ազատությունը հիմքը դար-ծավ մեկը մյուսի հետեւից երեսն եկող կու-սակցությունների:

Տնտեսական ազատությունը ցամաքած ժո-ղովրդի կերքից փշուրները մատուցեց ղե-կավարությանը:

Աշխարհային ազատությունը փշեր խորի-րդային գրաքննության շրջաններ, դուրս եկավ վանդակաճաղերից եւ... կանգ առավ, մեր մտավոր ու հոգեւոր են միջնադարյան, եւ ժա-մանակակից մկնձուններն նույն ձեռով շարու-նակեցին՝ պախապեն իրենց կեղծավաճ-հարմա-րեցված մեկնաբանությունները:

Բայց ազատությունը կատարյալ չափից դարձավ հասկապեն հայ երիտասարդի հա-մար: Արեւմուտքից հիմնականում ֆիլմերի մի-ջոցով մերժված «ազատ» մտայնության ձգտումը մոռացության մատնեց ցանկացած հոգեւոր նպատակ: Հոգեւոր, մտահոգու-թյուններից, պարտականություններից, պա-տասխանականությունից ազատվելը դարձավ սեռեւէր մատուցական: Ընդունվեցին բարո-յականության, ճշմարտության, սիրո, գթա-րության, անկեղծության «արտասահմանյան» չափանիշներ, որոնք արտասովոր արագու-թյամբ իրենց կիրառությունը գտան կենցաղում:

Ինչեւէ: Գոյեւն վառ է: Ժողովրդավար հանրապետություն ենք, խոսքի ու մտքի ազա-տություն ունենք, մեր հազար ու մի իրավունք-ներից օգտվելու ազատություն ունենք, միայն թե... կարծես մեզ էլ պետք է իզոք մա-քառունով կանգնած այդ ազատությունը: Լրուծ ենք մեր հայ-րենիքը, պապական մեր հողը, մեր եսը... Իսկ դատարկվող քարաքի փողոցներում, մարդկանց աչ-քերում ու ծայրե-րում, թերթերում ու էկրաններին, մեր նո-ր-օտարաճող երգ ու պարի մեջ հանդարտ թեւաճում է հաղթա-նական անտարբե-րությունը:

- Ես ազատ մարդ եմ:
- Ազա՛տ: Ինչի՞ց:
- Ազատ եմ անելու այն, ինչ ուզեմ:
- Իսկ առաջ ի՞նչն էր արգելում:
- Հասարակական կարծիքը:
- Որ հիմա փոխվել է...
- Չէ՛, ես եմ փոխվել: Էլ ուշադրություն չեմ դարձնում:

Քրուցում ենք: Հասարակությունն իր համար օտարներն իր անդրակ խնամք է, նրա կարծի-քը՝ բալի բաժնաբանը, դրամ ուշադրություն դարձնող՝ հիմարություն (որի մեջ ինքը հա-րատել էր տարիներ շարունակ): Յիշում, իր կարծիքով, ազատ է: Հասցվում է այնպես, որ տարախաճող ուսերի թոթվես, խոսում է անփոփոխ ու բարձրագույն անգլիական մեքե-րումներով եւ շեշտադրությամբ, ընտրում է ո-րեւէ ոչ նորմալ ամբողջական փոխում է դիմա-կը կամ բնույթը ըստ վերջին սերիայի:

«Ազատություն» դիտողությունը ու խոր-հուրդը չենթու իր միակ արդարացունքն է: Հա-սարակական կարծիքի անվան տակ փախչում է ամեն դիտողություն-դատողությունից: Ա-զատ է:

Թվում է մի անմասն ազեղ: Ես կայն շրջա-պատի նկատմամբ իր անտարբերությունը վի-րավորանքի շեշտ ունի, գրեթե օտար է ընտա-նիքին, ընկերներ չունի, որովհետեւ հիմարու-թյուն ունեցավ իրեն իր պատկերացած ճշմար-տության (դիմացինի արտաճերի) մոլեմտիկը

հռչակել: Անհաշիվ են իր հասցած ցավն ու վշտերն իր բարեկամներին: Բայց սահման-ված չեն որեւէ քրեական կամ սահմանադրա-կան օրենսգրքով: Նա դեռ երեսակայում է, թե վայելում է հայրայթած ազատությունը, մինչ-դեռ ենթագիտակցական պատասխանատ-վությունն անվերջ կծնշի նրան ուղեկցելով մինչեւ վերջին ատյան:

Արեւելյան ժողովուրդը մշտապես սիրել է կատարելատիպեր, հետաքրքիր կերպարներ, ոճեր գտնել եւ ընդօրինակել՝ հագուստից, խո-սելաճից ու քայլվածքից մինչեւ մտածելա-կերպը, ըմբռնումները: Իսկ ժամանակի պայ-մաններում ամենահարմար կերպարները տրվում են բրազիլական սերիալներում եւ ա-մերիկյան ֆիլմերում:

Կարելի է ասել՝ Արեւմուտքի ծրագրային այս քաղաքականությունը հասավ իր նպատակին: Յիշում պատանիների ու երիտասարդների ճշնող մեծամասնությունն ինչ-ինչ կրթակա-ն հաստատություններ է համախմու՝ առանց ուս-ման նկատմամբ մկազագույն հետաքրքրու-թյան, սովանա է ամուսն հոգին ու այս ֆիլմե-րով թթացնում միտքը սնելով ամբարո ու ան-միտ զաղափարներով:

Հայցնում են նրանց իրենց ազատ համա-րող նոր սերնդի ներկայացուցիչներին, արդ-յոք իրենց ազա՛տ են գտնում նաեւ տասնաբան-յա պատվիրանները պախելու ձգտումից: Պա-տասխանը միշտ գրեթե նույնն է. «Անհուժեշտ որ եղավ, պիտի խախտես»: Իսկ ո՞րն է անհ-րաճեշտը: Մտացածն պատասխանները կա-րելի է բաժանել երկու մասի:

Սեռեւէրն զաղափարի պես այսօր հայ երի-տասարդին հետապնդում է հասարակակա-ն կարծիքին ուշադրություն դարձնելուց առաջ եկած բարդություններից ազատվելու ձգտումը: Ի՞նչ է այդ «հասարակական կարծիքը», եւ արդյո՞ք այդքան կարելու է ազատվել դրա ազդեցությունից: Չեմ կարծում: Ինձ հայտնի է, թե ինչ կլինի այդ ազատությունը ձեռք բերե-լուց հետո:

Ահա եւ ամենատարբեր մախափրություննե-րի տեր, իրենց ազատ համարող պատանինե-րի ու երիտասարդների կարծիքներն անհրա-ժեշտության դեպքում պատվիրանները չպա-հելու մասին:

ա) Առավել մաքիւրնորում են արեւմտյան կողմի, համագործակցում ու արտաքին ֆիլմերը:	բ) Առավել հաճախ դի-տում են բրազիլական սերիալներ:
Ուրիշ աստվածներ (կուրթեր) չունենաւ:	Ջանի դեռ մրանք չեմ արդարացնում մարմնա-կան նորմանր համոյա-րելի տրվելը:
Պատվիր թո իորն ու մո-րը:	Ջանի դեռ մրանք չեմ փորձել ուսմանարել սահմանադրական իրա-վունքները:
Մի՛ սպանիր:	Երբ վտանգ չես, որ ու-սմանարելյան ձեռքը չես ընկնի:
Մի՛ շնացիր:	Ի՞նչ շնացաւ: Ոչ մի բանն էլ շնացաւ չէ: Հայաստա-նում այդ մակարդակը չէ:
Մի՛ գողացիր:	Երբ գողմարը մեծ չէ:
Մտու մի՛ վկայիր:	Երբ կրնովես ու ավելի վառ կլինի:
Հարեւանդ ունեցվա-ծին այդ մի՛ ունեցիր:	Երբ միայն այդ ունեցա-լով չես բավարարվելու:

Կան հարցեր էլ, որտեղ այս երկու խիստ տարաբնույթ խմբերի տեսակետները միա-վորվում են, ինչպես օրինակ՝ «Դուրս էլ գալիս ես կարող ես, փախիր ես դաքից, եւ բանա-կից, եւ հայրենիքից, շրջանիցի օրենքը, ար-համարիի դիմացինի կարծիքը, ասա այն, ինչ ուզում ես եւ արա այն, ինչ ուզում ես... Կարծ ասած՝ ազատ եղիր»:

Ազա՛տ լինել... Արդյո՞ք մաքարավանու-թյան, անմտության, անբարարականության ու անպատասխանատվության այս լուծույթը կապ ունի ազատության հետ: Արդյո՞ք սա՛ էնիք երազում դարել շարունակ: Ո՛րն է ինքն այս աղետն, եւ ո՞վ է պատասխանատուն: Ինչպե՞ս կասեցնել այս կործանարար երեւու-թք, որ փողը առ փողը ընդլայնում է իր սահ-մանները:

Սիրելի ընթերցող, եթե մտախոգում է եւ քեզ այս հարցը եւ կցանկանայիր առաջարկել թո պատասխանը, գրի՛ր «Քրիստոնեայ շայա-տանի» խմբագրատուն:

Կարճեմ Մարտիրոսյան
Պետականաշխարհի ուսանողուհի

ՓԱՌԱՍՆ

Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ընդունման 1700-ամ-յակի առթիվ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի «Շողակաթ» հեռուստատեսությամբ եւ 1700-ամյակի եկեղեցական համեմատողվող կազմակերպում են հոգե-ւոր թեմայով տեսանյութերի ամենամյա փառատոն, որի անդամակ մրցա-նակաբաշխությունը տեղի կունենա մոլեմտեղի 4-ին:

Փառատոնը նպատակ ունի խթանելու հեռուստատեսային ոլորտում հո-գեւոր թեմաներով տեսանյութերի արտադրությունը՝ ի նպաստ Հայ Առա-քելական եկեղեցու ծանաչողության եւ նրա հեղինակության բարձրաց-ման:

Արցախյան կարող են ներկայացվել Հայոց եկեղեցու քարոզչությանը նպաստող հեռուստաֆիլմեր, հեռուստահաղորդումներ եւ քարոզչական տեսահոլովակներ, որոնցից լավագույն ծանաչված աշխատանքները կարժանանան «ՇՈՂԱԿԱԹ-2000» հաղթանշանին եւ դրամական պար-գեւել:

1. հեռուստաֆիլմի համար՝ 2000 \$
2. հեռուստահաղորդման համար՝ 700 \$
3. տեսահոլովակի համար՝ 1500 \$

Հայ Առաքելական եկեղեցու քարոզչությանը նպաստող բացառիկ հա-ջողված աշխատանքի համար սահմանվում է նաեւ «ՇՈՂԱԿԱԹ» գլխավոր մրցանակ. նախատեսվում է եւս 1500 \$ դրամական պարգև:

Բացի այդ, բարձր պրոֆեսիոնալիզմի եւ ստեղծագործական յուրօրինա-կության համար սահմանվել են նաեւ խրախուսական մրցանակներ՝ ստեղծագործող առանձին անհատների համար:

- հեռուստաֆիլմի մտահղացման կամ լավագույն սցենարի հեղինակին՝ 400 \$

- հերմետիկ ռեժիսորին՝ 500 \$
- լավագույն օպերատորին՝ 400 \$

Փառատոն-մրցանակաբաշխությանը մասնակցել ցանկացողներն իրենց աշխատանքները կարող են ներկայացնել մինչեւ սեպտեմբերի 30-ը: Փա-ռատոնի կազմակերպման մյուս մանրամասների մասին տեղեկանալու համար պետք է դիմել «Շողակաթ» հեռուստատեսության:

Հասցեն՝ Ռ. Իսրայելյան 21
ՇՈՂ առաքնորդարան
«Շողակաթ» հեռուստատեսություն
հեռախոս 584 722, 587 368
FAX 151 731

Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի
տեղեկատվության համակարգ

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 8-ին Երեւանի կաթողիկէ Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգեւոր իովիվ Ավետիս Բահանա Դանիելյանը եւ ծիսական խորհուրդը կազմակերպել էին ուխտագնացություն Արգինի Արգել գյու-ղի Սուրբ Գեորգ եկեղեցի: Ուխտագնա-ցությունը մասնակցեցին դարձա դասը եւ ծիս անդամները:

Սուրբ Գեորգ քաջամարտիկ զորավա-րը հայ ժողովրդի սիրելի սրբերից է: Դրա վկայությունն են սրբի անունը կրող բազմաթիվ եկեղեցիները Հայաստանում եւ արտասահմանում, ինչպես նաեւ այն, որ բազմա-բազմաթիվ հայեր իրենց երե-խաներին անվանակոչում են Գեորգ:

Սուրբ Գեորգը ապրել է 3-րդ դարում. ծնունդով Կապադովկիայից էր, քրիս-տոնյա ընտանիքի զավակ: Ջիզմորազ-վում, կարճ ժամանակամիջոցում հաս-նում է զորավարության աստիճանի հռո-մեական բանակում եւ չափազանց սիր-ված էր Դիոկղետիանոս կայսեր կողմից: Գեորգը, ասկայք, ընդդիմանում է կայս-րին, որը ցանկանում էր հալածանք սկսել քրիստոնյաների դեմ, դրա համար էլ են-թարկվում է բազում ահալող շարչա-րանքների, որոնց քաջաբար դիմանում է: Ի վերջո համաձայնություն է հայտնում մտնել մեղան, ասկայք մտնելուն պես կործանվում է կուրթերը, ինչի համար էլ անմիջապես գլխատվում է: Սուրբ Գե-որգի նախապաշտության քվականքն ըն-դունված է համարել 303-ը:

Արգել գյուղի Սուրբ Գեորգ եկեղեցին

19-րդ դարի կառույց է: Կառուցվել է Ա-րաշկերտից գաղթած հայություն կողմից: Բակում պահպանվել են նաեւ հոգեւոր իովիվների գերեզմանները:

Այսօր եկեղեցին վերանորոգման խիստ կարիք է գտնում: Ներսիսյան դասակարգված քարե ալիկները վկայում են այն մասին, որ ցանկություն կա սկսել վերանորոգ-ման աշխատանքները. տա՛ Աստված, որ դրանք կատարվեն որքան հնարավոր է շուտ:

Հոգեւոր իովիվ ձեռամբ կատարվեց ա-ռավելության ժամերգություն, ապա հա-վատացյալները ծնկաչոք երգեցին «Տե՛ր, ողորմյան» եւ «Հայրապետական» օրի-ներգը: Մեկ անգամ ես աղոթք ու փառա-բանություն հնչեց եկեղեցու պատերից ներս՝ կարծես նոր շուն է աղվում հա-ղորդելով նրան: Ապա ուխտավորները հավաքվեցին գեղատեսիլ բնության գրկում սիրո ճաշի սեղանի շուրջ: Երեկո-յան, մեկ անգամ ես այցելելով եկեղեցի, նրանք եկեղեցին լիովին վայելած հոգե-ր օրհնություններով:

Մեր Շողիակաթությունն ենք հայտնում ուխտագնացության հովանավորներին ու կազմակերպիչներին, նաեւ ցանկանում ենք համապատասխան անձանք ուշադ-րությունը հրավիրել մեր բազմամյա եկե-ղեցիների, մատուռների, սրբավայրերի վրա, որոնցից շատերը կարող են հոգա-տար ձեռքի իրենց նախկին վայելչու-թյունը վերականգնելու համար:

Կարինե Առաքելյան

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկաթաբաթեր
Յիշմանդի՛ր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակիչ՝ Ա. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն

Գրանցման վկայական՝ 624, Հաշիք՝ 69333
Գլխավոր խմբագիր՝ Ստոդիկ Ստամբուլյան
Խմբագրություն հասցեն՝ ք. Վարդապետ, Ա. Գայանե եկեղեցի, Քրիստոնեական համարակալության եւ քարոզչության կենտրոն

Հեռախոս՝ (0+59) 56780

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան

Ստոր. Ե. տպագր. 15. 6. 2000 թ. Տպագր.՝ 2500

Գինը՝ 50 դրամ